



Տ. ԲԱԳՐԱՏ ԱԲԵՂԱ ԳԱՍՏՅԱՆԻ ՔԱՐՈՉԻ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ

(6 օգոստոսի 2000 թ.)

«Որ պարծին, ի Տէր պարծեսցի»

*«Ով պարծենում է, թող պարծենա
Տիտու Քրիստոսով»*

(Ա Կորնթ. Ա 31)

Պողոս առաքյալն է այսօր խոսում մեզ հեպ այս Սուրբ Պատարագի ընթացքին՝ իր փորձից և իր ապրած կյանքից օրինակ բերելով, թե Աստծո իմաստությունը այս աշխարհի վրա հիմարություն է համարվում, Աստծո իմաստությունը գայթակղություն է այս աշխարհի վրա և այդ պարճառով Աստծո հիմարն է, որ իմաստուններից էլ իմաստուն է։ Եվ եզրակացնում է սուրբ առաքյալը, թե ով պարծենալիք ունի, թող պարծենա Աստծո այս իմաստության մեջ։ Ով պարծենալիք ունի, թող պարծենա միայն Քրիստոսի խաչով։

Այսօրվա մեր ընտրած բնաբանն առաջին հայացքից շատ փարփունակ և, ինչու չէ՞ նաև խրթնեցնող է։ Որպես մարդ արարածներ ամեն մեկիս համար Աստծո գոյությունը երբեմն շատ փարակուսելի է, Աստծո ներկայությունը՝ երբեմն ոչ զգալի, և մենք՝ մարդ արարածներս, կամաց-կամաց, հեղուկալեռներն սկսում ենք դառնալ ինքներս մեր կենտրոնը, սկսում ենք դառնալ մարդակենտրոն, և այսպեղ է, որ Պողոս առաքյալի խոսքը ևս մեկ անգամ գալիս է հաստատելու, թե Աստծո իմաստությունը մարդկանց համար դառնում է հիմարություն, այսպեղ է, որ մենք Աստծո գոյությունը կամ Աստծո ցույց տված այս սքանչելի աշխարհը, այս պարկերները համարում ենք հիմարություն, որովհետև իմքնահայտնագործությամբ ինքներս մեր մեջ իջնելու այդ ցանկությունը չունենք, որ տեսնենք Աստծո իմաստությունը, իրական իմաստությունը, որ «հիմարություն» է այս աշխարհի համար։

Այսօր երես ամ Երես կանգնած ենք գրույցի՝ առարկայական, զգալի, շոշափելի, միմյանց հեպ լինելու այս Պատարագի ընթացքին, հաղորդվելու այս Պատարագի

ընթացքով: Էականը մեր հոգու լարերով, մեր հոգու բաբախումներով զգալն է մեր Տիրոջ ամենօրյա գոհաբերությունը, մեր Տիրոջ հավիտենական գոհաբերությունը, որ այս աշխարհի համար հիմարություն է համարվում:

«Քալ լիցի ինձ պարծել, բայց միայն ի խաչն Քրիստոսի»: Ի՞նչ է ուզում ասել առաքյալը: Սնված լինելով, ուսուցված լինելով հույն իմաստության աղբյուրից, ինչպես նաև որպես հրեա ռաբբի, հրեա վարդապետ, սնված լինելով օրենքի աղբյուրով, հրեականության աղբյուրից ինքնահայրնագործության և Աստծո անմիջական թելադրանքով, Աստծո հավիտենական հայրնության միջոցով Պողոս առաքյալը՝ այս մեծ և սուրբ առաքյալը, վերջապես հասկացել էր, որ աշխարհում չկա մի հավիտենական բան, որի վրա մարդ կարող է հույս դնել, և այդ հույսը վերջում արդարացված կլինի: Այս պարճառով է, որ իր թղթերից մեկում ևս առավել շեշտում է, թե հույսն է, որ չի ամաչեցնում, բայց այն հույսը, որ այս աշխարհի վրա չէ, այլ Աստծո վրա է: Եվ այդ թուղթը, գրված հռոմեացիներին, կամ կորնթացիներին, կամ այլ ժողովուրդների, դուրս է գալիս Ավետարանի պարմության շրջանակից և գալիս-խառնվում է այսօրվա մեր կյանքին:

«Քալ լիցի ինձ պարծել, բայց միայն ի խաչն Քրիստոսի»: Հազար անգամ ասվել է, և նորից եմ ուզում կրկնել, որ մենք, որպես ժողովուրդ կամ հավաքականություն, արտահայտվել կամ չենք արտահայտվել, գիտակցությամբ կամ ենթագիտակցությամբ ասել ենք, թե «բավ լիցի մեզ պարծել», բայց միայն Քրիստոսի խաչով: Թող որ մենք չպարծենանք, բայց միայն մեր պարծանքը լինի Քրիստոսի Խաչը, բայց այսօր, սիրելիներ, կարծես թե ճկվում ենք, որպես մարդ անհատներ և որպես հավաքականություն, ամենապարզ արհեստավորից, ամենապարզ աշխատավորից մինչև ամենավերին արյաններում գրավողները, մեր երկրի տերերը, որ մենք ենք՝ ամեն մեկս, կարծես թե ճկվում ենք, կարծես թե մոռացել ենք այդ Խաչով պարծենալու, Քրիստոսի մեջ ապրելով պարծենալու իրականությունը: Եվ եթե ամեն մեկիս կյանքում փորձառությունը ցույց է տալիս, որ հավիտենական ոչինչ չկա՝ ո՛չ հարսությունը, ո՛չ դրամը, ո՛չ փառքը, ո՛չ տիպոդոսները, ոչինչ: Աշխարհը շարժվում է, Աստծո սպեղծագործությունը առաջ է գնում, հոսում է, և այդ ճանապարհի մեջ է նաև, որ և՛ մարդը, և՛ այս աշխարհը, և՛ սպեղծագործությունն անընդհատ մաքրվում են: Այդ մաքրման ճանապարհի մեջ է, որ այն հեռու-հեռավոր բարձունքում, մի բարձր լեռան վրա է կանգնած Աստծո Խաչը, Աստծո սիրտ արտահայտության նշանը, և որպես Տիրոջ ձեռքի սպեղծագործությունը՝ մենք, որ ապրում ենք այս աշխարհի վրա, ուրբերս դնելով այս հողի վրա, մեր ամենօրյա կյանքի մեջ արդյոք հարց տալի՞ս ենք, թե ինչ է մեր պարծանքի առարկան՝ մեր ունեցածը, մեր դրամը, մեր փառքը, մեր տիպոդոսը, մեր ժամանակավորապես գրաված պաշտոնը, որ մեր կյանքի վերջին մեզ հետ միասին հող է դառնալու. ո՛չ երբեք: Եթե հույսներս դրել ենք սրանց վրա, ուրեմն ավարի մեզ: Բայց վստահաբար գիտենք, ամեն մեկս էլ իր առանձնության մեջ հայրնագործում է այդ իր ներքին խաչը, հայրնագործում է Տիրոջը տեսնելու, հանդիպելու և խոսելու այդ գեղեցկությունն ու հաճույքը: Այսպես է, որ մեր քրիստոնյա լինելու կո-

չումը արդարացվում է: Այստեղ է, որ որպես անհատներ և որպես ազգ գալիս ենք թաթախվելու Տիրոջ այդ սրբացնող ավազանի մեջ, և այսօրվա մեր կյանքը երբեք էլ չի լավանալու ո՛չ փնտրեսապես, ո՛չ սոցիալական խնամարներով, որովհետև ունենք վերևից ներքև դժգոհների մի ամբոխ, ոչ թե ժողովուրդ, ոչ թե Սուրբ Գրքում եղող անապարտվ անցնող, փառապանքի և ցավի միջոց անցնող մի ժողովուրդ, որի շուրթերին և նորից անեծքն էր, ոչ թե այդ սրբության ցանկությամբ շարժվող, գեղի պես հոսող ժողովուրդ, այլ ունենք դժգոհների և անիծողների մի ամբոխ, և այդ անեծքի ու դժգոհության մեջ մեր պարծանքի առարկան երբեք էլ խաչը չէ, մեր պարծանքի առարկան, ցավոք սրտի, փորձում ենք դառնալ ամեն մեկս, որովհետև այդ դժգոհության և անիծելու մեջ ամեն մեկս մեզանից հեռու ենք փանում այդ անեծքը, մեզ՝ յուրաքանչյուրիս չի վերաբերում, այլ մեր դիմացինին, մեր ընկերոջը: Բայց այդպես չէ՝ Աստված սերը, այդպես չէ՝ Աստված խաչը:

Հավատում ենք կամ չենք հավատում Սուրբ Գրքի պարմություններին, Հին Կրակարանի պարաստության խորհուրդը, որ եկավ և իր կարարումը գրավ մեր Տիրոջ մարդանալու մեջ, մեր Տիրոջ՝ մեր մեջ քայլելու մեջ, ցույց է փալիս Աստված ինքնահայտնության մեծագույն և խորին խորհուրդը, Աստված՝ մարդկանց հետ լինելու ցանկությունը, և մենք հավատում ենք, որ մեր Աստված ոչ թե վերացական երկինքներում Աթոռների վրա բազմած Աստված է, այլ մեր Աստված անհապապես մեզ հետ ապրող, մեզ հետ շնչող Աստված է, այստեղ մեր Տեր Աստվածը և՛ այս փառանքի, և՛ մյուս փառարների մեջ, և՛ մեր առօրյայում ապրում է մեզ հետ, գործում է մեզ հետ, և այստեղ միայն մնում է մեզ, յուրաքանչյուրիս, և՛ անհատ, և՛ հավաքականություն, թե թո՛ւյլ ենք փալիս, որ Աստված բնակվի մեր մեջ, և մեր մեջ բնակվելով կարողանո՞ւմ ենք հպարտորեն, պարծանքով ասել, որ իմ պարծանքը ոչ այլ ինչ է, եթե ոչ իմ անձնական, անհատական և գործող Աստվածը: Եթե ոչ այն Աստված, որ եկավ և ինձ՝ մեղավորիս համար Իր արյունը թափեց, որ եկավ և սիրո խորհուրդը բերեց մեզ, որ եկավ ջնջելու անեծքը մեր շուրթերից և անեծքը մեր վրայից, որ մեր առաջին հայրերը գործել էին և այդպիսով անկման մեջ էին ընկել: Այսօր մենք ենք ժառանգել այդ անկումը, այդ ցավը, այդ փառապանքը, այդ փանջանքը, դժգոհությունը, բողոքը և ամեն ինչ:

Տիրոջ մարդանալու խորհուրդը ոչ այլ ինչ է, եթե ոչ Աստված խելահեղ սերը Իր սրբո՞ւնագործության նկատմամբ՝ մեր նկատմամբ: Նա անընդհատ ցույց է փալիս Իր դեմքը, Նա անընդհատ ցույց է փալիս Իր ինքնությունը և քայլը թողնում է մեզ, յուրաքանչյուրիս՝ մեր ընկերոջ ճանապարհով, ամեն մեկս մյուսի հետ աչք առ աչք, երես առ երես հաղորդվելու ճանապարհով կարողանալու հայտնագործել մեր Տիրոջը և այնժամ ասել, թե՝ Զավ լիցի ինձ պարծել, բայց միայն Տիրոջ խաչով:

Միբեյինեք. արևելյան ավանդության մեջ մի շարք գեղեցիկ պարմություն կա: Ասվում է, թե Խոջա Նասրեդինը, որի մասին րեդյակ եք դուք, օրերից մի օր մահճակալի փակ ինչ-որ բան էր փնտրում: Իր հարևաններից մեկը մոտենում է՝ ասելով, թե՝ Միբեյիս, ինչ ես փնտրում այս մահճակալի փակ: Նասրեդինը պարասխանում է, թե՝

Բանալիս եմ փնտրում, և սկսում են երկուսով փնտրել: Երկար փնտրությունից հետո վերջապես ընկերը չի դիմանում և ասում է. Ուր ես կորցրել թո՞ բանալին: Նասրեդինը պարասխառնում է. Իմ բանալին փանն եմ կորցրել: Այնժամ ընկերն ասում է. Բարի Աստված, այդ դեպքում ինչո՞ւ ես այստեղ փնտրում: Պարասխառնը հեկոյալն է լինում. Որովհետև այստեղ ավելի շարժում լույս կա:

Ներսիսյան է միտք-բանին, թե որքան էլ որ լույսի մեջ կամ թվացյալ լույսի մեջ ապրելիս լինենք, եթե չկա մեր փնտրելիքը այդ լույսի մեջ, ուրեմն լույսի գոյությունը ոչնչով օգուտ չի փալիս մեզ: Այս աշխարհը, Նայասարան աշխարհը ժամանակներ և ժամանակներ շարունակ այդ լույսի ներկայության և գոյության մեջ է ապրել, բայց ցավոք սրտի բանալին, այդ շարժ փնտրելիք բանալին կորցրել ենք ուրիշ փնտրել, և Աստված ներկայության այդ լույսը ոչնչով օգուտ չի փալու մեզ, եթե մենք սխալ փնտրել ենք փնտրում այդ բանալին, եթե չենք ուզում միանալ Նրա աչքերին, Նրա ձեռքերին, Նրա կրծքի մեջ ապրելով: Ինչպես է դա լինում. ինչպես ավերարանիչն է ասում՝ Եթե ասում ես, որ սիրում ես Աստված, բայց չես սիրում ընկերոջդ, ուրեմն ապախոս ես: Եթե ուզում ես սիրել Աստված, նախ պիտի սիրես ընկերոջդ: Այսօրվա մեր հավաքական կյանքի մեջ ազնիվ գրավելով քանի՞սս ենք, որպես մարդ արարածներ, սիրում մեր ընկերոջը:

Թող որ Աստվածածնի բարեկենդանի շենին կանգնած լինելով այսօրվա խորհուրդը, թե «բավ լիցի պարծել, բայց միայն Տիրոջ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Խաչի խորհրդի մեջ», որպես հարցադրում դառնա, թե արդյո՞ք ես սիրում եմ իմ ընկերոջը, արդյո՞ք կարողանում եմ նրա սիրո միջից, կամ փորձում եմ նրա սիրո միջից Աստվածին գրավել, իմ սպեղծիչին, իմ սպեղծագործողին գրավել, և այսօր դուրս գանք այս փառաբանից պարծանքի զգացումով, որ ունենք պարծենալիք միայն մի բան՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Խաչը, ո՛չ դրամ, ո՛չ փառք, ո՛չ փիպոյոս և ո՛չ մի այլ դժվարություն չի կարող մեզ ընկճել, չի կարող մեզ ծունկի բերել, ճկել այն ծանրության փակ, որով փառավորվում է ամեն ցավ և փանջանք, որ է՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Խաչը:

Թող Աստված լույս իջնցնի այս երկրի վրա, Սուրբ Աստվածածնի վերափոխմամբ ամեն մեկս անհապապես կարողանանք ես առավել վերափոխվել և մտնել Տիրոջ հեղ խաչելության խորհրդի մեջ, Տիրոջ այդ Գողգոթայի բարձունքից նայող սիրո մեջ:

Թող Աստված սերը, շնորհը, մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչելության խորհուրդը և Սուրբ Հոգու համբույրի ողջույնը լինեն մեզ բոլորիս հեղ. ամեն: